Նատալյա Էլվանի Լափաուրի

Ծնվել է 1974թ. սեպտեմբերի 3-ին Թբիլիսիում։

1980-1990թթ. սովորել է Թբիլիսիի թիվ 96 միջնակարգ դպրոցում։

1992թ. ընդունվել, 1996թ. ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը՝ պատմության ուսուցչի որակավորմամբ։

1997թ.-ից առ այսօր «Հայաստանի համայնքների ասոցիացիա» ՀԿ-ի գործադիր տնօրենն է, 2009 թվականից առ այսօր՝ «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության գործադիր տնօրենը, ««Եվրոկովկաս» եվրոռեգիո» իրավաբանական անձանց միության գործադիր տնօրենը։

2002 թվականից առ այսօր՝ Եվրոպայի խորհրդի Տեղական ու տարածքային իշխանությունների Կոնգրեսում Հայաստանի պատվիրակության քարտուղարն է։

1996-2000թթ. եղել է «Աջակցություն պետական ծառայությանը» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալը, 1996-1999թթ.՝ ՀՀ Ազգային ժողովի պետահիրավական հարցերի հանձնաժողովի փորձագետ։

2002թ.-ից առ այսօր համայնքների ղեկավարների, համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացների կազմակերպական հարցերով պատասխանատուն է, միաժամանակ իրականացնում է դասախոսական աշխատանք՝ վերապատրաստումների շրջանակում։

2005 թվականից առ այսօր՝ «Համայնքային կառավարման ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է։

2011 թվականից առ այսօր՝ «Արենի փառատոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է։

2008-2009թթ. մեծամասնական ընտրակարգով ընտրվել է Երևան քաղաքի Նոր Նորք թաղային համայնքի ավագանու անդամ։ 2009-2010 թվականներին համամասնական ընտրակարգով ընտրվել է Երևանի ավագանու անդամ։

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ։

2011 թվականին պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի Պատվո մեդալով՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը զգալի ավանդի համար։

2006թ. պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալով՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը զգալի ավանդի համար։

Տարբեր տարիներին ստացել է պատվոգրեր, վկայականներ, հավաստագրեր միջազգային տարբեր կազմակերպություններից (այդ թվում՝ Համաշխարհային բանկ, GTZ, USAID, InWent, Եվրոպայի խորհուրդ և այլն)։

Անկուսակցական է։

Ամուսնացած է, ունի մեկ որդի։